

# ԿՐՕՆԱԿԱՆ

## ՓՐԿԻՉԸ ԳԵՐԵՉՄԱՆԻ ԱՌԱՋ.

«Արի որ ներեայ եւ կանգնեաց ի մե-  
նեոց, եւ յուսաւ որեւցեղ գեղ Քրիստոս».  
Եփես. Ե. 14:

**Չ**ԱՏԿԱԿԱՆ տօներին և նախնիքայ  
ապաշխարութեան օրերում քանի  
քանի խորհրդաւոր պատկերներ զայիս անցնում  
են մեր աչքի առջևից, որոնք մեր Փրկչի եր-  
կրաւոր կենաց վերջին հանդամանքները նկար-  
ագրելով՝ ամբողջ խորհրդածութեան նիւթ են  
ընծայում մեզ մարդկային կեանքի ամենա-  
նուրբ խնդիրները շօշափում և ամենամուժ  
զաղանկներին վերայ պայծառ լոյս սփռում:  
Քաւական է մեր մտքում այդ պատկերներից  
մէկը միայն վերարտադրենք. Փրկիչը գերեզ-  
մանի առաջ:

Այդպէս տեսնում ենք Սորան երեք անգամ:  
Տեսնում ենք ինչպէս մօտենում է ՍաԽը բարեկամ  
Ղազարոսի գերեզմանին՝ խոռովեալ հոգ-  
ւով և արտասուքն աչքերին... Սէ արտասուեաց  
Յիսուս — ասում է Աւետարանիչն ու անցնում  
բայց որպիսի խոր զգացումներ և մտքեր են  
արթայայտուած այդ երկու բառի մէջ: Արդեօք  
նորա համար արտասուեց Փրկիչը ինչպէս  
հրէաները բացատրում էին որ իւր սիրած  
անձի գերեզմանին էր մօտենում նորա տարած-  
ած մահուան ողբը լսում չըջապատող  
ներից: Մասամբ այո՛ւ մեր մօտիկ ծանօթի  
մեր արիւնակից և սրտակից բարեկամի կորուս-  
տը աւելի կենդանի կերպով զգալ է տայիս մեզ  
մահուան սոսկալի բռնութիւնը կեանքի վերայ  
որին մենք ինքներս ենթակայ ենք, և մերմտ-  
քում ձմրում մեր սիրտը: Սակայն ո՞ւմ էր  
սիրում Փրկիչը երբ արտասուում է ո՛չ մեզ  
նման մի սոսկ մահկանացու, այլ նոյն ինքն

Կեանքի Առաջնորդը՝ Սորա արցունքները շատ  
աւելի մեծ զին պէտք է ունենային և աւելի  
գորեղ շարժառիժներից բղխած լինէին քան  
դէպի մի պատահական բարեկամ տաճած մաս-  
նակի համակրութիւնը իւր մէջ անդրադարձ  
էր. Սորա բարեկամն այն դժնդակ աղէտի  
զոհն էր, որ ծանրանում է Ադամի բո-  
լոր որդիների վերայ. այս գերեզմանը ներկա-  
յանում էր անշուշտ Սորա աչքին իբրև մի  
ահազդին անսահման գերեզման, որ կյանել էր  
և շարունակում էր կյանել բարեկամ մարդ-  
կութեան ամբողջ կեանքը. և այն մի քանի  
կաթիլ արտասուքը, որ նորա արեգակնային ա-  
չերից ցողեցին՝ աւելի խոր վիշա և աւելի մեծ  
սէր էին երևան հանում, քան այս ամենա-  
կուղ գերեզմանի շուրջ թափուած բոլոր ար-  
տասուաց հեղեղները միասին. փղձուկն էին  
նորա այն մեծ սիրոյ, որ անձը բարեկամի հա-  
մար զնել տայով՝ ամէն արտասուաց աղբիւր  
պէտք է ցամաքեցնէր: Յիսուս արտասուում  
էր մարդոց վիշտը տեսնելով, բայց Սորա ար-  
ցունքը տկարութեան և վհատութեան ար-  
ցունք չէր, մահը Սորա համար այն անպար-  
տելի բռնաւորը չէր, ինչպէս մեզ է երևում:  
Սա իւր հետ բերել էր մի շղթայ, որով  
պէտք է կապէր այդ հոգին և թափէր նորա  
խաւարային բանտում թաղուած հոգիներին.  
և ահա իւր Ծրկնաւոր Հօր անունով  
որի լոկ խօսքը զոյութիւն տուեց տինգերքին  
և շունչը մեռեալ բնութեան կենդանութիւնն  
է՛ կանչում է գերեզմանից չօրեքօրեայ դիա-  
կին. ՍԼ Ղազարոս — և մեռեալը կենդանանում  
էլնում է... :

Տարբեր է տեսարանը, որ պատկերացնում  
է մեր Փրկչին մարդկութեան մի ուրիշ գե-  
րեզմանի առաջ կանգնած: Ծրուսազէմն է այդ

գերեզմանը Դաւթի արքայանիստ լուրը քաղաքը որանց խնկուում էին ճշմարիտ Աստուծոյ երկրպագուները Նորա միակ ամամբում՝ պաշտօն և պատարագ մատուցանելու որանցից օրէնք և ճշմարտութեան պատգամներ պէտք է կընէին Աստուծոյ բնորեայ ժողովրդի և նորա միջոցով բոլոր մարդոց համար Երուսաղէմ՝ ուր անշափ անգամ Իորայիլի Աստուծոյ փառքը երեւցել էր և կայծակնամարտը մարդարեւերի բերանով Նորա կամբը յայնուել: Այժմ մի գերեզման էր այսօր Երուսաղէմը՝ գերեզման էր պատարասում՝ նոյն իսկ Նորա համար, որ եկել էր իւր բոլոր իղձերին ու ակնկալութիւններին լրումն տարու և մարդարեւերի գուշակածը կատարելու. և Շա կարծես բոլորովին անգոր է ու անմխիթար այդ գերեզմանի հանդէպ այստեղ թաղուած կենդանի մեռեալին Շա ոչ միայն մի կամ երկու անգամ կանչել, մահացու քնից զարթեցնել էր կամեցել, այլ օրերով ու շաբաթներով գործ էր դրել Իւր աստուածային բարաստի բոլոր ճարտարութիւնը նորա խաւարային հողերը աշխարհը թափանցելու, այնտեղ լոյս և կենդանութիւն սփռելու համար, բայց ի գուր. և այժմ՝ այս՝ անցեալ փառքով և ներկայ ձոխութեամբ, սուրբ փայրերով և բարձրարեւծ պարիսպներով ու աշտարակներով պարծեցող բարեշէն քաղաքը աւերակների մի կոյտ էր Իւր աչքում՝ մի գերեզման, որի աւերն անպատակի կակիծ էր պատճառում Իրեն. բայց այդ կակիծն արտասուքով մեղմացնել չէր կարող: Տեսնում էր թէ, ինչպէս կենդանի Աստուծոյ ժողովուրդը ձեւապաշտութեամբ և մնայլ նախապաշարումներով կուրացած՝ փայտացել ստուել, մի անկենդան դիակ էր դարձել: Ինչպէս նորա լուսող զին գաւախները ցանուցիր էին եղել կոյր առաջնորդների ետեւից բնկած մոլորուել, և այդ դիակիս այդ անհոյժ հասիս այդ անմայր ձագերի գլխին սրտոյս էր գալիս հոռիմտական արծուինս պատրաստ ամեն բոպէ, քրքրելու քնքնու նորան երկրի երեսից. կիսմենար շունչ տալ գիակինս իրրե արթուն հոյժու որոնել, ի մի ժողովել մալրեալ ոչխարներինս իրրե սիրազորով մայր իւր թեւերի տակ պաշտպանել անտիրական ձագուկներինս բայց գորա համար անհրաժեշտ

էր որ դիակն ինքը շարժուել կամենար ոչխարներն ու ձագերը Իւր ձայնը լսելիս. ահեղ բարբառով այս մեռեալին ոտքի կանդնեցնել և պատուերներով ու յորդորական խօսքերով նորան ճշմարտութեան հողի և արդարութեան սեր ներշնչել չէր կարելի. աւեր էին այստեղ արդէն սրակերը և Տիրոջ օծեալի ամենատես աչքը տեսնում էր թէ, ինչպէս շատ չանցած աւեր կդաւնան և նոցա աներբ, մորմնքում էր և գայլանում, բայց այդ աւերն անխուճափելի էր. մնում էր սակաւ բնորեաներին միայն խել նորա գրկից— խիստ լմանկ գնով յիրաւի սակայն Երկնաւոր Հօր կամքն այդ էր և ճշմարիտ փրկութեան ճանապարհն այդ, և Աստուծոյ հնազանդ Ուղին գնում էր այդ ճանապարհով:

Շու ահա Շա կատարել է Հօր կամքը՝ փրկանքը յձմարել, զժուարթիտ ճանապարհն ու մահուան կամուրջն անցել՝ փշիպ պատկը երկնային փառաց պատկի փոխելով կանգնած է երբորդ անգամ մի գերեզմանի մօտ— Իւր սեփական գերեզմանն է այդ՝ դատարկ գերեզման ... Մազգաղկնային՝ մեղքերի ապականութեան տղմից ելած և աստուածային սիրոյ կրակով աշտորուող կինը, իրրե մեղաւոր և փրկութեան կարօտ մարդկութեան մարմնացում՝ խոնարհել այնտեղ Իւր Փրկչին է որոնում: Բայց Փրկչը գերեզմանի մէջ չէ, դարձիւր Մարիամն փրկե՛ նայիր. Նորա ոտքերն հաղիւ գեանին են կայումն իսկ գլուխն արդէն ամպերի մէջ է, հեռու երկրքի կապոյտ ու պայծառ եթերքի մէջ. Շա երկումն Շա բարձրանումն Շա Իւր Երկնաւոր Հօր մօտ է, գնումն և Զեյ կանչում է ու ձգում Իւր ետեւից. արի, Մարիամն կանգնիր, Զո Հօր և Զո Աստուծոյ մօտ արի ... Այլ ևս փակ գերեզման չկայ, այս գերեզմանի հետ բոլոր մեռեալների գերեզմանները բացուում են և Թարուցեալը լուսաւորումն կենդանացնում է նոցա բոլորին:

Շու ամէն անգամ երբ Եկեղեցւոյ բեմից հնչում է լուսոյ և կենաց մեծ աւետիքը՝ Զրիստոս յարեա ... Երուսաղէմի դատարկ գերեզմանի մօտից գէպի աշխարհի շորս կողմն են սրանում Փրկչի առաքեալները՝ յարուշխան հրեշտակների թեւերով, կանգնում են

խրաբաններ գերեզմանի առաջ, ամեն մարդու, ամեն քրիստոնէի գլխի վերեւ, և ձայն ապիս. Արի որ ննջեալ և կանգնեաց ի մեռելոց, և լուսաւորեցէ, զքեզ Թրիստոս. արի... Թրիստոս յարեաւ.— Եւ և դու, թօթափիր վրայիցդ մահուան քունը և ոտքի կանգներ. կոյր ազխաութեան խաւար գերեզման և անասնձ կրքերի դժոխային մի անդունդ է, քո կուրծքը, որտեղ աստուածային ճշմարտութեան լոյս և երկնային արդարութեան հուր ձգելու համար գերեզման և դժոխք իջաւ. քո Փրկիչը. բաց աչքդ, Գողգոթայի վերայ ծագած անձնադիր սիրոյ արեղական ճառագայթների խայթը չնս զգում, չնս լսում, և քո մեղաւոր հոգին չէ ցնծում՝ այդ աղու ձայնը լսելով. Մարիամ.— Եւ, քո Փրկիչը քեզ կանչում է, եւ և հետեիր Նորան, բարձրացիր Նորա հետ... Թրիստոս յարեաւ...:

Կ. Վ.



### ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

«Տէր լոյս իմ և կեանք իմ, ևս յուսմէ երկեայց. Տէր ապաւեն կենաց իմոց, ևս յուսմէ դոյզացայց».  
Սաղ. ԻՁ 1.

**Ո**Ր ևս երգեցող մարգարէի անուշիկ քնար, ուր ևս. Թրիստոնէութեան յայթանակի ԺԹ. գարն է, զիտութեանց գարունն է այժմ. քրիստոնէական բարոյականի ու մարդկային իմաստութեան անուանը ամեն օր, ամեն ժամ, ամեն վայրկեան տօն է կատարուում, բայց դու լուռ ևս, հրաշալի քնար. քո ձայնիդ ալիքը չի հնչում լիբանց բարձունքում, դու չես անցնում ու արձագանք ապիս պանծացող սերնդի գատարկ կրճքում. «Տէր լոյս իմ և կեանք իմ, ևս յուսմէ երկեայց. Տէր ապաւեն կենաց իմոց, ևս յուսմէ՞ դոյզացայց»:

Թրիստոնեայ հայ եղբայրներ, հերոսական մի ձայն է այս, աներկիւղ համարձակութեան մի արձագանգ՝ որ սկիզբ է առ-

նում մի անընկճելի սրտից, սահում, անցնում է նիւթապաշտութեան մութ մութ ձորերից, վեր ելնում զէպի կապուտակ կամարն ու իւր ետեից զէպի վեր քաշում մարդիկ ու ազգեր: Այդ ծայնի նշանաբանը քարոյական արիութիւնն է, քնարի այդ ուկեղէն լարը քարոյական աներկիւղութիւնն է:

Բարոյական արիութիւնը սովորական արիութիւն չէ. աներկիւղ ու համարձակ է վայրի գազանը, ինքնապաշտպանութեան ըզգացմունքը ետում է նորա մէջ. թշնամու ձայնը խեղդուում է նորա ձայնով, թշնամու հարուածները իւր հետ մէկ տեղ շատ անգամ նորա ոտից կոխանն են դառնում: Դա արիութիւն է, բայց դա չէ բարոյական արիութիւնը:

Աներկիւղ ու համարձակ է բարբարոսը, քրիստոնէութեան ու ճշմարիտ զիտութեան լոյսից զուրկ վայրի մարդը. նորա հրոսակներն առջեից մահ, ետեից աւեր ու սարսափ են տարածում: Դա արիութիւն է, բայց դա չէ բարոյական արիութիւնը:

Աներկիւղ ու համարձակ է նաւապար, տեսէք, որտում է երկինք, արեւը ծովի ետեն է անցել, հեղեղ, կարկուտ ու կրակ է սփռում երկինք խաւար ծովի վերայ. դղրդում է ծով, նորա կրճքում անդունդներ են բացուում, մահահատ ալիքները զէզ զէզ գրոհ են ապիս, բաղխում են իրար, ծովը լայն բացուած գերեզման է, դարձել: Սակայն նորա վերայ շրջում է նաւը: Վերից երկինքի հարուած, վարից ալիքների բաղխում, անձնատուր, անձնատուր, են աղաղակում. բայց նոքա փշրուում են նաւի հպարտ կրճքի և կողերի վերայ: Նորա խելում կանգնած է մի յանգուզն մարդ, աներկիւղ ու համարձակ վարում է նաւը, պատուում է ալիք, արհամարհում խաւար անդունդներ և յառաջ լողում. լուսաւոր մարդու միտքը շրջում է ծովերի վերայ: Դա էլ արիութիւնն է, բայց դա էլ չէ բարոյական արիութիւնն:

Արիութեան այս տեսակը ինքնապաշտպանութեան զգացմունքից է բղխում. բայց մի՞թէ մարդու գերագոյն կոչումը, գերագոյն նպատակը միայն իւր անձի մէջն է. մի՞թէ նիւթապաշտութեան արժամթիւ հանքերումն է